ես խաղաղութիւնը շահիմ : Ան ատենէն 'ի վեր է որ իմ սիրտս խաղաղութեամբ ու հանգստութեամբ լցվեցաւ : Այն կրնամ ստիկա զըուցել որ, Աստուածաշունչ գրքին մէջը եղած երկու հիմնական ճշմարտութիւններուն՝ բոլոր սրտանց քանի որ հաւատացեր եմ ու ճանչցեր եմ նէ, եղեր եմ երջանիկ . այսինքն՝ մարդուն անկումը Ազգամով, ու նորէն կանգնումը Մեսիայով : Անութեամբ՝ մասնակից եմ անկման, ու հաւատքով՝ մասնակից եմ կանգման : Աս փրկեցայ . աղէկ գիտեմ որ Մեսիային ձեռքովը Աստուծոյ առջևը արգարացայ, ու աս կեանքէս ետքը երկինքը պիտի երթամ, ու ամեներանեալ հոգւոց երջանկութիւնը յաւիտեան պիտի վայելեմ՝ Աստուծոյ երեսր տեսնալով : Այլ չեմ նմանիր մոլորեալ ոչխարի, վասն զի աղէկ հովիւ մը գտայ՝ որնոր Սովսէս ու մարգարէները առաջուց գուշակեցին : Աւ աղէկ ճանչցայ որ նոյնինքն է Յիսուս՝ Ազգովրեցին աշխարհիս Փրկիչն է, ու կենգանի Աստուծոյ Արդին է : Այն սիրելի եղբարք իմ . ատեն մը ես ալ ձեզի պէս անոր սուրբ անունը հայհոյեցի, ու ձեզի պէս անոր անձը ատեցի ու անարգեցի, ու խիստ շատը՝ անիկա վարդապետի մը տեղ դրի, ինչպէս կարելի է թէ ձեր մէջն ալ

չատր դեռ այնպէս կը կարծեն : Ա՛ս օրվան  
օրըս մի միայն անիկա կը սիրեմ , ու անոր  
չնորհակալ կը լլամ , վասն զի իմ մեղքերըս  
իր վրան առաւ . ու անիկա է որ իմ անօրէ-  
նութիւններըս վերցուց , ու անոր վէրքե-  
րովը ես իմ բժշկութիւնս գտայ :

Ա՛ն երկու հիմնական ճշմարտութիւննե-  
րը ճանչնալէն ետքը՝ Ա՛ստուածաշունչ գրոց  
չատ տեղիւնքը , որ առաջ ինձի բոլորովին  
անհասկանալի կերեւոյին կոր , անոնք ալ  
սկսայ հասկընալ : Մէկ քանին հոս տեղըս  
օրինակ պիտի բերեմ :

Երկրորդ օրինաց գրքին մէջը , գլ. ԺԵ՛, հա-  
մար 15, 18 : Մ՛ովսէսի նման մէկ մարդարէ  
մը խոստացվեր է , ու Ա՛ստուած կուզէ որ  
անոր խօսքը մտիկ ընէք . ապա թէ ոչ՝ ծանր  
պատիժներ պիտի տայ իր կողմանէ :

Պէտք է որ երկրորդ սաղմոսն ալ բոլորո-  
վին հոս տեղս վկայութիւն բերեմ :

### Վատ-խէի խօսքերը :

Ինչո՞ւ համար ազգերը կը ժողովին կոր , ու  
ժողովուրդները պարապ բաներ կը մտմը-  
տան կոր : Ինչո՞ւ համար աշխարհիս թապա-  
ւորները դէմ կը կենանկոր , ու իշխանները  
Ե՛կհօվային դէմ՝ ու անոր Մ՛եսիային  
դէմ մէկ տեղ խորհուրդ կընենկոր :



Կտրենք անոնց կապերը ինչպէս խոյ, ու  
անոնց պարանները՝ մեզմէ հեռու նետենք:

Երկինքը բնակողը պիտի ծիծաղի, ու  
Տէրը՝ զանոնք ծաղը պիտի ընէ:

Ըն ատենը բարկութեամբ անոնց հետը  
պիտի խօսի, ու շատ սրգողելով՝ զանոնք  
պիտի վախցունէ:

Երրորդ խօսքերը:

Ես օծեցի իմ թագաւորս՝ Սիօնին իմին  
սրբութեանս լեռանը վրայ:

Մեկուային խօսքերը:

Ես Եզհօվային վճիռը պիտի պատմեմ:  
Ըն ինձի ըսաւ, «Դուն իմ տղաս ես, ես քեզ  
ասօր ծնայ: Ինձմէ ուզէ, ու ես ազգերը  
քեզի ժառանգութիւն տամ. ու երկրիս  
ծայրերը՝ քեզի ստացուածք ասմ: Դուն  
զանոնք երկաթ գաւազանաւ պիտի հովու-  
ես, ու բրուտի ամանի պէս պիտի փշրես:

Չորսինի խօսքերը:

Ուրեմն հիմայ ո՞վ թագաւորներ հասկը-  
ցէք, ո՞ր դատաւորք երկրի խրատ առէք:  
Սխտով Եզհօվային ծառայութիւն ըրէք,  
ու դողալով՝ ուրախ եղիք: Զամբուրեցէք

Որդին, որ չի բարկանայ, ու բարկութիւնը  
քիչ մը ելլալու ըլլայ նէ՛ ճամբուն մէջը չի  
կորսը վիք: Արանի անոնց ամէնուն որ ա-  
նոր կը յուսան:

Անկէց ետքը\* իբ, խն ու ճժ, սաղմոսնե-  
րը: Սենք ետքի սաղմոսին առջի տուները  
հոս օրինակ դնենք՝

“Սաղմոս Ղաւթի: Աէհօվայն զըուցեց  
իմ Տէրօջս, Ղունիմ աջ կողմնստէ՛ ինչ-  
վան որ ես քու թշնամիներդ քուկին ոտքե-  
րուդ պատուանդան ընեմ: Աէհօվայն քու  
զօրութեանդ գաւազանը՝ Սիօնէն պիտի  
խրկէ, ըսելով, Վու թշնամիներուդ վը-  
րայ տիրէ”:

Ասայի մարգարէին է, ք, թ, գլուխը:  
բայց թ գլխուն 5 ու 6 համարը կը կար-  
դանք: “Սեզի մանուկ մը ծնաւ, մեզիտղայ  
մը տրվեցաւ, ու իշխանութիւնը իր ուսին  
վրայ պիտի ըլլայ, ու անունը դրին <sup>אֶלְשֵׁבֶת</sup>  
էլէէ, սքանչելի. <sup>יְצִיֵּי</sup> Եօէյ, խորհրդական.  
<sup>וְיִבֹרֶךְ אֱלֹהֵינוּ</sup> Ել Էլէո, Աստուած հզօր. <sup>בְּיָמֵינוּ</sup>  
այլ աս, <sup>וְעַתָּה</sup> յաւիտենականութեան,  
<sup>וְשִׁמְרֵנוּ</sup> իշխան խաղաղութեան:  
Անոր իշխանութեանը աճումը ու խա-  
ղաղութիւնը վերջ պիտի չունենայ: Ղաւ-

\* Աստ Եօլտնտանից, իւն, խն, ճժ:

Թի Թագաւորութեանը վրայ պիտի նստի,  
որպէս զի անիկա արդարութեամբ ու  
ուղղութեամբ ամուրցընէ ու հաստատէ  
հիմակուց ու միշտ : Օջրքերուն Մատու-  
ծոյն նախանձը աս բանս պիտի ընէ” :

Սոյն մարգարէին յետագայ գլուխներն  
այլ աս բանիս վրայ կրխօսէին, խ, խբ, խԹ, ծ,  
միւ՛չ և գիրքին վերջը : “Վմանապէս Արեմի-  
ային աս մարգարէութիւնը գլ, իգ, 5, 6 :

“Մհա օրերը կուգան՝ կրսէ Աէհօվայ, որ  
ես Ղաւիթէն արդար ընծիւղ մը իմ գա-  
տի իւ պիտի հանեմ, ու անիկա Թագա-  
ւորի մը պէս Թագաւորութիւն պիտի ընէ .  
բարեբաղդ պիտի ըլլայ, աշխարհիս վրայ  
դատաստան ու արդարութիւն պիտի ընէ :  
Մն օրերը՝ Յուդան պիտի ազատի, ու  
Խորայէլը ապահովութեան մէջը պիտի բը-  
նակի, ու անոր՝ աս անունը պիտի տրրվի,  
Աէհօվայ՝ արդարութիւն մեր : տես նաև  
Աբէ՛, Ը, և Լա” :

Մեկէց ետքը՝ Աղեկիէլ մարգարէին լի  
գլ, 23, ու 24 համարը, աս խօսքերը կրկար-  
դանք : “Աս պիտի հանեմ անոնց վրայ (ոչ-  
խարներուս վրայ) մէկ հովիւ մը, որ զանոնք  
արածէ. այսինքն իմ Ղաւիթ ծառաս. ա-  
նիկա զանոնք պիտի հովուէ, ու ինքը անոնց  
հովիւը պիտի ըլլայ. ու ես Աէհօվայ անոնց

Աստուածը պիտի ըլլամ, ու իմ Ղաւիթ  
 ծառաս՝ անոնց մէջ իշխան պիտի ըլլայ. ես  
 եմ Աէհօվայն՝ ես խօսեցայ” : տես նաև  
 Եղեի, ԳԼ, ԼԷ, 24, 25 :

Վայց Միքիա մարգարէին Ե ԳԼ, 1 ու 3  
 համարը, աս երևելի մարգարէութիւնը  
 գրված կայ .

וְאַתָּה בֵּרַתְּ לָחֵם אֶפְרָתָה צִעִיר לְהַיֹּת בְּאַלְפֵי יְהוּדָה  
 מִמָּדָר לִי וַיֵּצֵא לְהַדְרֹת מֹנֶשֶׁל בְּיִשְׂרָאֵל וּמִוֹצֵאֲתֵיךָ מִמִּקְדָּם  
 מִרִּמֵּי עֹלָם : לָכֵן יִתְּנֶם עַרְעֵת יוֹלְדָה יוֹלְדָה וְיִתֵּר  
 אֲחֵרֵיךָ וְשׁוֹבוֹן עַל־בְּנֵי יִשְׂרָאֵל : דַּעֲמֵד וְרַעָה בְּעֵינֵי יְהוּדָה  
 בְּגֵאוֹן שֵׁם יְהוּדָה אֲלֹהֶיךָ וְיִשְׁבֹּי פִּי־עַתָּה יִגְדֹּל  
 עַד־אַפְסֵי־אָרְץ

Վայց դուն՝ բերթլէհէմ Ղաւիթայ, թէպէտ  
 և դուն շատ պզտիկ ես Յուդայի հազարա-  
 ւոր Կապտիկէն մէջը, քեզմէ պիտի ել-  
 լայ Ասրայէլին իշխանը, ու անոր ծնունդը  
 ՚ի սկզբանէ յաւիտենական օրերէն է : Ա-  
 նոր համար անոնք պիտի թողու, ինչպէս  
 ան ատենը որ ծնանողը ծնանի, ու իր եղ-  
 քայրնեւրուն մնացածը դէպ ՚ի Ասրայէլի որ-  
 դիքը պիտի դառնայ : Անիկա պիտի հաս-  
 տատովի, ու Աէհօվային զօրութեամբը, ու  
 իր Աէհօվայ Աստուծոյն անուանը փառաւո-  
 րութեամբը պիտի կառավարէ : Վայց անոնք  
 պիտի մնան, վասն զի հիմայ անիկա ինչպէս

աշխարհիս ծայրերը պիտի փառաւորվի :  
 Սերջապէս՝ Օտք, 7, 8, 9, 12 ու 13,  
 ու գլխի 19 : Ընտքի գլխուն մէջը մար-  
 գարէն կրկանչվըռտէ :

“Ըստ ուրախ եղիր ոմ գուստր Սիօնի,  
 բարձր ձայնով ցնծա՛ գուստր Երուսաղէմի,  
 ահա թագաւորդ քեզի պիտի գայ, արդար  
 ու փրկիչ, խոնարհ՝ ու իշու ու յաւանակի  
 մը վրայ հեծած” : Բողոքատէ՛ Սիքեայ, 7,  
 ու Եգլուխը :

Ընտանը՝ մեր հին բաբբիններուն գըր-  
 ոււածքին մէջը եղած շատ տեղվանքը սկըսայ  
 հասկընալ : Ընտնք՝ իմ հիմակվան բերած  
 վկայութիւններու բողոքն ալ Սեսիային  
 վրայ մեկներեն. լարկումներն ալ այնպէս  
 մեկներեն : Ըտորներհակը՝ նոր բաբբիները՝  
 իրենց վարդապետական նախապաշար-  
 մունքներովը՝ աս բերած վկայութիւննե-  
 րուս նորանոր մեկնութիւններ տրվին :  
 Աւստր վրայ զարմանալ պէտքը չէ՝ վասն  
 զի մարգարէութիւններուն հին ու ճշմարիտ  
 մեկնութեանը պատճառաւը՝ Քրիստոնէից  
 հետ վիճարանութիւն ըրած ատեննին, մեծ  
 նեղութեան ու շփոթութեան մէջ կիյնային  
 կոր, անոր համար սուտ մեկնութիւններ  
 հնարեցին, որ կերպով մը զիրենք խալըս-  
 ցընեն. ապա թէ ոչ՝ ի հարկէ Յիսուս՝ Աս-

զովրեցին ճշմարիտ Մեսիայ ըլլալը պիտի  
ընդունէին. կամ թէ Սուրբ գրոց հեղինակ-  
ները սուտ զրուց են պիտի ըսէին :

Եւ այց ասոնց մէջն ալ շատը ասանկ չէին  
զրուցերկոր . ու բերած վկայութիւննե-  
րը՝ Մեսիային վրայ զրուցված ըլլալը, ու  
տրւած մեկնութեանս ալ ճշմարիտ ըլլալը  
բարեմտութեամբ կրխոստովանէին . բայց  
որպէս զի՝ բոլոր աշխարհ առ խոստովա-  
նութեանս նայելով չի պարտաւորի անկէց  
մէկ յայտնի եզրակացութիւն մը հանելու,  
'ի հարկէ մէկ երկրորդ Մեսիայ մը հնա-  
րեցին, ու անունը դրին Եօֆօն Գալիլէացի .  
ճշմարիտ Մեսիայէն որոշելու համար, որ  
կրտւի Եօֆօն Գալիլէացի, Մե-  
սիայ՝ որդի Գալիլէացի:

Եւ երկու մեսիաներուն արտառօց  
կարծիքը հերքելու համար՝ միայն աս  
բանս զրուցել հերիք է, թէ բոլոր հին կտա-  
կարանին մէջը՝ աս բանս հաստատելու հա-  
մար, նաև յովտ մը գտնալը անկարելի է:  
Եւ այց յայտնանէ՝ աս կարծիքս հերքելը  
շատ դիւրին է . որովհետև նոյն իսկ Եօֆօ-  
նները՝ երկու մեսիային չեն հաւատար .  
երբոր Բրիստոնէից հետը վիճաբանու-

Թիւն կրնեն՝ ու նեղը կիյնան նէ, առ քանքս  
միայն ան ատենը կըզրուցեն:

Սենք մեր խօսքը նայինք:

Ան միջոցին մէջը ես քանի մը տարա-  
կոյս ալ ունէի, որ ինծի Հրէութենէ մնա-  
ցեր էր. մէկը՝ թլփատութեան վրայ էր,  
մէկայն ալ՝ շարած օրերուն վրայ: Ան  
տարակոյսներն ալ ցրուեցան. վասն զի  
Աստուածաշունչ զրոց դպրատանը մէջ  
սորվեցայ, որ ան օրէնքները՝ Վատա-  
հանաց հին անտեսութիւն էր. ու ինչպէս  
վերը հասկըցուցինք՝ միայն խորհրդաւոր  
բան մը էր, ուստի և պիտի դադարէր,  
որպէս զի ուրիշ մէկ նոր կ'սրգադրութիւն  
անոր տեղը բռնէ. քնոր ուխտ մը՝ որուն  
որ անիկա ձեն էր:

Հիմակվան զրուցած խօսքըս միայն  
մարդկային փաստ կամ հաստատութիւն  
չէ. այլ նաև Աստուծոյ խօսքերուն մէջը  
բացայայտ կերևայ: Աբե. լւ. 31—33:

“Ահա ան օրերը կուգան կոր՝ կըսէ Աբե-  
Տօվայ, որ ես \* նոր ուխտ մը պիտի ընեմ  
Խորայէի տանը հետ, ու Հոգայի տանը

\* Ան խօսքս աղէի ղնենելու է: Աստուծոյ  
տան փեղս չի խոստանաոր ինչ հին ուխտը  
նորագելու, այլ նոր ուխտ էր ընելու:

հետ : Չէ ան ուխտին պէս որ անոնց հարցը հետ ըրի , ան օրը երբոր ձեռքերնէն բռնեցի , որ զանոնք Ազիպտոսի երկիրէն դուրս հանեմ . անոնք ան աւխտը աւրեցին՝ թէպէտ ես անոնց անհոգութի կրնէիկոր , կրսէ Աէհօվայն : Բայց ասիկա է ան ուխտը՝ որ Խորայէլի տանը հետ պիտի ընեմ : Են օրերէն ետքը՝ կրսէ Աէհօվայն , ես իմ օրէնքս անոնց մէջը պիտի դնեմ . ու անոնց սրտին մէջը պիտի գրեմ անոնք . ես անոնց Մատուածը պիտի ըլլամ , ու անոնք ալ իմ ժողովուրդս պիտի ըլլան” :

Ահդ օրինաց գրքին մէջը՝ գլ . ԺԷ . 15-19 եղած մարգարէութիւններն ալ նոյն միտքով հասկընալու է , ուր որ ըսված է՝

“ Աէհօվայն քու Մատուածդ , քու եղբայրներուդ մէջէն՝ ինծի պէս մարգարէ մը քեզի պիտի հանէ , անոր պիտի մտիկ ընէք : Ենոնց եղբայրներուն մէջէն՝ քեզի պէս մարգարէ մը անոնց պիտի հանեմ . ու իմ խօսքերըս անոր բերանը պիտի դնեմ , ու ինչ որ անոր պատուիրեմ պիտի նէ՝ անիկա անոնց պիտի զրուցէ : Ու ո՛վ որ մտիկ ընելու չըլլայ ան խօսքերուն , որ ան իմ անունովս պիտի զրուցէ , անոր հաշիւը անկէց պիտի ուզեմ” :

Ուրեմն Մատուած կուզէ որ ամէն մարգասնոր մարգարէիս հնազանդի :



Իսայց թէ որ՝ մեր հասկըցածին պէս,  
 ու մեր սր գիրքերուն տրւած նշաններուն  
 նայելով Սեսիայն հարկաւորապէս եկած  
 էնէ, ու թէ որ՝ Սովսէսի պէս՝ (որ Խարա-  
 յէլը Ագիպտոսի գերութենէն ազատեց)  
 մեղաց գերութենէն բոլոր մարդիկ փրկեց  
 նէ, կամովին զինքը զոհ ընելով ܦܕܝ ܩܝܣܝ  
 պասեքին օրը, զատկական ճշմարիտ դատին  
 պէս, որուն որ նաև մէկ ոսկորը կոտրելու  
 հրաման չիկար, վերջապէս՝ թէ որ աս մար-  
 դարէս անանկ կեանք մը անցուց որ ոչ միայն  
 Լստուծոյ հետ մտերիմ հաղորդութիւն  
 ունէր, ու Սովսէսի պէս անոր հետ ܦܕܝ ܩܝܣܝ  
 ܩܝܣܝ ܩܝܣܝ Ի Բերան՝ ի բերան կրխօսէր, այլ  
 նա ինքն յաւիտենական ծագմանէ յառաջ  
 եկած էր, ու Լստուծոյ ܩܝܣܝ ܩܝܣܝ հաւա-  
 սար էր ինչպէս որ Լստուածաշունչ Վիրքը  
 մեզի կրչայտնէ. Սբ. ե. 1. ու Օտ. ԺԳ. 7:  
 Լնկէց ետքը՝ պէտք է մի դեռ զարմանալ.  
 Թէ ինչո՞ւ համար Խարայէլացիք անիկա չըն-  
 դունեննուն համար՝ այսչափ դարերէն հետէ  
 Լստուծոյ սոսկալի պատուհասներովը կը-  
 պատժրվին կոր:

Երբ որ հին կտակարանը խորունկ մը  
 կարգալով՝ Վրիստոնէից դէմ ունեցած  
 նախապաշարմունքներէս խալըսեցայ նէ,  
 նոր կտակարանն ալ սկսայ կարգալ: Շատ

զարմացայ, երբօր աս գիրքս Սովսէսի  
 ու մարգարէից գրուածքին բոլորովին հա-  
 մեմատ ու համաձայն գտայ. ու կրնամ ը-  
 սել, թէ աս գիրքս ուրիշ բան չէ, բայց  
 եթէ անոնց յաւելուածը: Եւ Սուրբ Գիր-  
 քը իրեն աստուածային ծագումը՝ ինքիրմէ  
 կը ցուցնէ: ու շուտ մը զիս համոզեց, թէ  
 Յիսուս իրաւցրնէ մեռելներէն յարու-  
 թիւն առեր է, ու աշակերտներուն ըրած  
 խոստմունքը կատարեր է, ու անոնց խրկեր  
 է מִן־הַמֵּתִים հայտնիչ וְ ոգին Սուրբը.  
 որ զանոնք բոլոր ճշմարտութեամբ կա-  
 ռավարեց, ու բոլոր ճշմարտութիւնները  
 անոնց սորվեցուց, ու անոնց տրվեր է բո-  
 լոր աւ անսովոր յատկութիւնները՝ որ  
 անոնց հարկաւոր էր՝ Եւստուծոյ դեսպանը  
 ու առաքեալը ըլլալու համար, ու աշխար-  
 հիս բոլոր աղգերը Մեսիային գարձունե-  
 լու համար:

Ա՞յլ ամենասիրելի եղբարք իմ, թէ որ  
 կարենաք միտքերնուդ մէջը հաստատ որո-  
 շելու որ թէպէտ անոնք շղթաները կտորէք,  
 ու անկողմնասէր ու ուղիղ միտքով մը  
 կ'որ կտակարանը կարդալու ըլլաք նէ,  
 անտարակոյս դուք ալ շուտ մը ինծի հետ  
 կը համոզվիք, ու կը հասկընաք որ անոր  
 ծագումն ալ՝ հին կտակարանին պէս՝ Եւ-

անուծմէ է: Նոր կտակարանն ալ Տին  
 կտակարանին պէս կըսորվեցունէ, որ Սե-  
 սիայի թագաւորութեանը ատենը՝ օրինաց  
 արարողութիւնները անօգուտ եղան ի-  
 րենց վախճանին հասնելուն համար, և  
 թէ՛ Մատուծոյ երկրպագութիւն ընելու  
 համար, ալ պէտքը չէ ոչ Արուսաղէմ,  
 և ոչ ուրիշ մէկ մասնաւոր տեղ մը եր-  
 թալ. այլ թէ մարդս կրնայ՝ ու պէտք է  
 որ Մատուծոյ երկրպագութիւն ընէ հոգևով  
 և ճշմարտութեամբ, ամմէն տեղ ու ամմէն  
 ատեն: Մնաց որ՝ նոր կտակարանը Սով-  
 սէսի օրէնքին պէս՝ քարեղէն տախտակի  
 վրայ գրված զանցառութեան ու մեղաց դէմ  
 պատուիրանքներ միայն չիտար, այլ կը պա-  
 հանջէ կատարեալ դարձ մը, ամբողջ նորո-  
 գում սրտի, ու անոր միջոցներն ալ ինքը  
 կըսորվեցունէ: Մարդու վրան աս փոփո-  
 խութիւնը՝ մէյմը եղածին պէս, որուն որ  
 նոր կտակարանը նորէն ծնանիլ, ու Տին  
 կտակարանը լլիպտո-լի-ն սրտի կըզոյ-  
 ցեն, ան ատենը Մատուծոյ օրէնքը անոր  
 սրտին մէջը կըգրվի: Մն մարդը՝ Մատուծոյ  
 կամքը կըկատարէ, ու կըսիրէ Մատուծոյ  
 կամքը ընելու. ոչ թէ յաւիտենական  
 կեանքը ձեռք ձգելու համար, այլ վասն  
 զի Մատուած Յիսուս Քրիստոսի ձեռ-

քովը անիկա իրեն ձրի պարգևեց: Ան  
 Խորայէլացին՝ որ աս նոր ծննդեանս կը-  
 չասնի, թէ որ կուղէնէ կրնայ իրեն քանի  
 մը արտաքին սովորութիւնները պահել .  
 զորօրինակ կերակրէն առաջ ու ետքը՝  
 ձեռք լըլալ, խոզ կամ արիւն չուտել, ևն.  
 նոր կտակարանը աս բաները իրեն չար-  
 դիւէր . միայն թէ աս դիտաւորութիւնը  
 պիտի ունենայ, որ անիկա ընելով՝ ըն-  
 կերութեան մէջը աղէկ ու օգտակար սո-  
 վորութիւն մը կը պահէ կոր . ու ընաւ  
 միտքէն պիտի չանցունէ, որ անիկա ըրած  
 ատենը՝ Աստուծոյ աչաց առջևը արդիւ-  
 նաւոր գործք մը ըրած է:

Այց շաբաթ օրերուն վրայ, Աւետա-  
 րանը մեզի կը սորվեցնէ, որ առաքելները  
 ու առջի Վրիստոնեաները՝ եօթներորդ  
 օրվան տեղը՝ առաջին օրը տօն կամ կիրակի  
 բռնեցին, ՚ի յիշատակ նոր ստեղծման . որ  
 Յիսուս Վրիստոսի յարուրը կընքե-  
 ցաւ, ու Հոգւոյն Արբոյ գալստեամբը՝  
 մեղաւոր մարդկութեան հաղորդը վեցաւ  
 կամ տրվեցաւ: Աս երկու դիպուածքն ալ  
 շաբաթուն առջի օրը եղաւ: Ուրեմն Վրիս-  
 տոնեաները՝ նոր կտակարանին նայելով,  
 առաքելոց կանոնները ու սորվեցուցած  
 բաները՝ մարգարէից ու նոյն իսկ Յիսուսի

Քրիստոսի պատուիրանքներուն պէս՝ պա-  
 Տելու պարտաւոր են: Աւստի հին օրի-  
 նաց մէջ եօթներորդ օրը ինչ հեղինա-  
 կութիւն ունեցաւ նէ, նոր օրէնքին մէջն  
 ալ առաջին օրը նոյն աստուածային հե-  
 ղինակութիւնը ունի: Միայն մէկ բան  
 մը կար, որ խել մը ատեն ինծի մութ երե-  
 ցաւ. քի՛ աշխարհիս անկատար ու անբա-  
 րոյական վիճակը: Աստուածաշունչ գիր-  
 քը ԴՆԴ մեղի կըսորվեցունէ, որ Մեսիային  
 ատենը՝ մէկ հովիւ մը միայն պիտի ըլլայ.  
 ալ կոխ պիտի չըլլայ. թուրերը՝ փայտա-  
 տի, ու նիզակները՝ հօտոցի պիտի փոխար-  
 կին. Ասայ. ք. գառը՝ խաղաղութեամբ  
 գայլին հետը մէկ տեղ պիտի արածի.  
 Ասայ. ԳԼ. ԺԿ. կէ: Արդ՝ աս խոստմունք-  
 ները դեռ չեն կատարված: Իմայ մենք  
 աս բանիս նայելով՝ կրնանք մի ստոյգ կեր-  
 պով մը ապացուցանել, թէ Մեսիայն  
 դեռ չէ եկած: Աս մտածմունքը իս շատ  
 անհանգիստ ըրաւ. բայց Սուրբ գիրքը ու-  
 շագրութենով ու խորունկ մը կարգալով  
 աս բանիս վրայօք քանի մը աղվոր ու  
 բացայայտ մեկնութիւններ գտայ, որ իս  
 էւելօք գոհ ըրին: Ահա ի՞նչպէս: Աս-  
 տուածաշունչ գրքին մէջը եղած պատմական  
 ու մարգարէական գիրքերուն ոճը՝ իրարմէ

շատ տարբեր գտայ: Պատմական գիրքերը շիտակէ շիտակ ժամանակագրական կարգով մը եղած գործքերը եւեւէ ետե կը պատմեն: Անոր ներհակը մարգարէից գիրքերը մարգարէութիւններ, գուշանակութիւններ, կամ թէ՛ Աբրայական բառերուն նշանակութիւնները աղէկ հասկըցընելու համար וְהָיוּ מִתְּוֹךְ מִתְּוֹךְ מִתְּוֹךְ հասկըն տեսիլքներ կը պատմեն: Մարգարէները וְהָיוּ מִתְּוֹךְ מִתְּוֹךְ וְהָיוּ מִתְּוֹךְ, տեսանող՝ նկատող կը սսվին: Անոնք կը հսկէին որ տեսնան, թէ իրենց ինչ պիտի զրուցվի. וְהָיוּ מִתְּוֹךְ וְהָיוּ מִתְּוֹךְ 1: Անանկ մէկ վիճակի մը մէջ կը գտնուվէին որ՝ միտքերնին կը լսալիշտակվէր. וְהָיוּ מִתְּוֹךְ וְהָיוּ מִתְּוֹךְ: Աս վիճակիս մէջը գտնված ատեննին, Աստուած՝ անոնց ներքին աչաց առջևէն ապագայ դիպուածները կանցունէր. ու անոնք՝ ան դիպուածները պատկերի մը պէս կը տեսնային: Մակարդակի մը առաջին՝ երկրորդ ու երրորդ կարգի առարկաները գիմացէն ու հեռուանց նայելու ըլլաս նէ, անանկ իրարու մօտ կերևան որ՝ իրենց մէջը եղած հեռաւորութիւնները աչքի չերևար. ասանկ ալ մարգարէները իրենց ունեցած հոգևովը հեղ մը նայելով, խիստ հեռու՝ քիչ հեռու ու խիստ մօտ գալիքը մէկէն կը տեսնային, անոնց մէջը ատեն

չորոշելով , ու ամմէնը մէկ կամ բոլոր մը սեպելով : Ասոր համար է որ՝ անոնց զրուցուածքը զարմանալի ոճ մը ունին . ու աս պատճառաւ է որ՝ շատ հեղ իրարմէ շատ հեռու եղած դիպուածները՝ առանց ժամանակագրական կարգի՝ մի միայն ու մի և նոյն գլխուն մէջը գրված են . ու անանկ կերպով մըն ալ պատմեր են , որ կարծես թէ ամմէնը մէկ տեղ պիտի ըլլայ :

Մեսիային վրայ եղած տեսիլքներն ալ՝ նոյն կերպով ու նոյն ոճով գրված են . վասն զի շատ հեղ մի և նոյն գլխուն մէջը միացած կըգտնանք Մեսիային խոնարհութիւնը , ու անոր հոգևոր թագաւորութեանը սկզբնաւորութիւնը . ու Մեսիային փառաւորութիւնը , ու անոր երևելի թագաւորութիւնը . երբ որ նորէն պիտի գայ կենդանիները ու մեռածները դատելու համար : Ահա ասոր համար է որ , մարգարէները գալիքը պատմած առնենին՝ անցեալը կամ ներկայն շատ կըգործածեն : Ահա—տսլի բառն ալ՝ որ անոնց գրուածքին մէջը շատ տեղ կըհանդիպի , վերը ըսածս կըհաստատէ :

Աս կերպովըս կըցայ որոշել Մեսիային առաջին գալուստը խոնարհութեամբ ու չարչարանքով եղած Վրկիչի մը պէս ,

անոր երկրորդ գալուստէն որ պիտի ըլլայ  
 փառաց մէջ՝ աշխարհի դատաւորի պէս :  
 Առաջին գալուստը կատարվեցաւ , երկ-  
 րորդ գալուստը դեռ պիտի ըլլայ : Ան  
 մարգարէութիւնները որ Միսիային չար-  
 չարանացը ու անոր հոգևոր թագաւո-  
 րութեան ընթացքը կրկնուին, անոնք ամենն ալ  
 (ըստ բառին) կատարվեցան : Իսկ ան  
 որ դեռ չէ կատարված, անոր կատարվե-  
 լունն ո՞վ կրնայ երաշխաւոր ըլլալ : Այս  
 երբոր Սեսիայն տարիներէն ետքը նորէն  
 գալու ըլլայնէ, ան ատենը նաև իր փառ-  
 քը պիտի տեսնուի, անիկա ամեն բան  
 պիտի կատարէ, Աստուծոյ թշնամիները  
 պիտի կործանէ, Իսրայելի մնացորդը նո-  
 րէն պիտի հաստատէ, իր թագաւորու-  
 թիւնը երկրի բոլոր բնակիչներուն մէջ  
 պիտի ընդարձակէ, կռիւր ու մեղքին ամ-  
 մէն լեզի պտուղները պիտի աւրէ, կատա-  
 րեալ ու յաւիտենական խաղաղութիւն մը  
 պիտի հաստատէ, մէկ խօսքով զրուցեմ,  
 ամեն բան նորէն պիտի հաստատէ : Ան  
 ատենը ամեն մարմին պիտի տեսնայ, որ  
 Յաւիտենականին բերնէն ինչ որ ելա-  
 նէ Այս ու Ամէն է, իր սիրական որդւոյն  
 Յիսուս Մեսիային ձեռքովը :

Սերջապէս Աստուածաշունչ Վերբը



ինծի ծանօթութիւններ կուտայ կոր ան  
 «դորմելի վիճակին վրայ, որուն մէջը մեր  
 ազգը սյսչափ դարերէ՛ ի վեր ընկած է, ու  
 ԾԴՅ զօժ, Էթանոսներուն որդեգրու-  
 թեանը վրայ: Ա՛հա քանի մը մարգարէ-  
 ութիւններ, որ աս քանին վրայ կըխօսին:  
 “ Ե իլօհին պիտի վերաբերի ազգերուն  
 հնազանդութիւնը” կըսէ Յակոբ, որ ան  
 ալ Խասհակայ ու Աբրահամու պէս՝ Աս-  
 տուծմէ խօսք առեր էր թէ “ Աշխարհիս  
 բոլոր ազգերը՝ անոնց զաւակովը պիտի օրհ-  
 նըվին”: Ասայեայ գլ. խբ. 1—12 հա-  
 մարը, աս յետագայ խօսքերը կըկարդանք:

“ Ա՛հա իմին ծառաս, ես անոր պիտի օգ-  
 նեմ, իմ ընտրածս՝ որնոր իմ հոգիս սիրեց,  
 ես իմ հոգիս անոր վրայ դրի, անիկա  
 ազգերու մէջ արդարութիւն պիտի գոր-  
 ծածէ. չի պիտի կանչվըռտէ. իր ձայնը  
 չի պիտի բարձրացընէ, ու ճամբաներուն  
 մէջը լսել չի պիտի տայ. ջախջախած եղէ-  
 գը չի պիտի կտորէ, ու ծուխը ելլող պատ-  
 րիւքը չի պիտի մարէ մինչև որ դատաս-  
 տանը ճշմարտութեան հանէ: Չի պիտի  
 տկարանայ չի պիտի կործանի. ինչվան  
 որ արդարութիւնը երկրի վրայ հաստա-  
 տի: Աւ կղզիները անոր օրէնքին մտիկ  
 պիտի ընեն: Ասանկ ըսաւ հզօր Աէհօվայն,

որնոր ստեղծեց ու տարածեց երկինքը . որնոր երկիրը ու անոր արմախքը ընդարձակեց , ու անոր վրան եղած ժողովրդեանը շունչ տուաւ , ու մէջը պտըտողներուն ոգի : Աս Աէհօվայս քեզ կանչեցի արդարութիւն , ես քու ձեռքէդ պիտի բռնեմ . ու քեզ պիտի պահեմ . ես քեզ պիտի տամ ուխտ ժողովրդեան ու լոյս ազգաց . կոյրերուն աչքերը բանալու համար , բանտարդեալները բանտէն ազատելու համար , ու մութի մէջ բնակողները՝ բանտէն հանելու համար : Աս Աէհօվայ եմ . աս է իմ անունս . ես իմ փառքս ուրիշի չի պիտի տամ . ու ոչ իմ գովութիւնս փորված պատկերներու : Ահա առջի բաները եղան . ես նոր բան ծանուցում կրնեմ , ու դեռ չեղած ձեզի կիմացընեմ : Արգեցէք Աէհօվային մէկ նոր օրհնութիւն մը . անոր գովեստը երկրի ծայրերէն , ծովուն վրայ նաւով պտըտողներ , ծովուն մէջը եղողներ , կողիներ ու անոնց բնակիչները , անապատը ու անոր քաղաքները յայնչինն բարձրացընեն . ան վրանները՝ ուր որ Աեդար կը բնակի . ապառաժներու մէջ բնակողները յաղթութեան երգեր թող կանչեն , լեռներուն գլուխէն թող գոչեն : Աէհօվային թող

փառք տան . ու անոր գովեստը կղզիներու  
 մէջ պատմեն” : Աոյն մարգարէն կըսէ գլ .  
 խթ . 6 : “ Աս բան մը չէ որ դուն իմ  
 ծառաս ըլլաս . յակորայ ցեղերը նորէն  
 հաստատելու համար , ու Խարայէլին մնա-  
 ցորդը դարձնելու համար . այլ ես քեզ  
 տրվի , որ աղգերու լոյս ըլլաս . ու երկրի  
 ծայրերուն իմ փրկութիւնս : Աւ կն գլ .  
 1—2 , Սեսիայն մարգարէին բերնովը  
 կըզրուցէ : “ Վնտովեցայ անոնցմէ որ իս  
 չէին հարցունէր , գտնովեցայ անոնցմէ որ  
 իս չէին փնտրուէր . ան ազգը՝ որ իմ անու-  
 նովս չէր զրուցվեր ես անոր ըսի . Ահա  
 ես . Ահա ես : Աս ամմէն օր իմ ձեռքս  
 երկնցուցի դէպ ’ի ապստամբ ժողովուրդի  
 մը , որ իրենց մտքին հետեւելով՝ գէշ  
 ճամբաներու մէջ կըպըտըտին կոր” : Ավ-  
 սեայ մարգարէին գրքին մէջը աս երեւելի  
 մարգարէութիւնը կըգտնանք , գլ . 7 . 4—5 :  
 “ Խարայէլի որդիքը՝ շատ օրեր առանց  
 թագաւորի , առանց իշխանի , առանց զոհի ,  
 առանց արձանի , առանց եփուտի , ու  
 առանց թերափի պիտի մնան . բայց ան-  
 կէց ետքը՝ Խարայէլի որդիքը պիտի դառ-  
 նան . ու իրենց Աէհօվայ Ատուածը , ու  
 Վաւիթը իրենց թագաւորը պիտի փնտռեն  
 ու ետքի օրերը պիտի պատուեն Աէհօվայն

ու անոր բարերարութիւնը” : Աւրեմն  
 թէ որ Մեսիային թագաորութիւնը  
 մեր գիտցածին ու ճանչցածին պէս ալ  
 չէնէ, ՚ի հարկէ Մատուծոյ առաջուց զրու-  
 ցածին պէս պիտի ըլլայ :

Աղբարք իմ՝ երբոր Մեսիայն նորէն  
 գալու ըլլայ նէ, ան ատենը մեր աստու-  
 ածահաճոյ ազգին մնացորդն ալ՝ անոր փա-  
 ռացը ու փրկութեանը մասնակից պիտի  
 ըլլայ . վասն զի անոնք անոր պիտի դառ-  
 նան . ու պիտի ճանչնան զանիկա, որնոր  
 իրենց հարքը ծակեր էին . ու պիտի ցաւին  
 ինչպէս որ մէկը կը ցաւի իր անդրանիկ  
 տղուն վրայ : Բայց ինչվան անատենը՝  
 թիրահաւատութեան մէջը մեռած Հրէա-  
 ներուն վրայ պիտի ճշմարտի ան խօսքը,  
 թէ “Ո՛վ որ չըհաւատայնէ, պիտի դա-  
 տապարտուի” . Մարկ . ԺԳ . 16 : Արու-  
 հետե “Աւրիշով փրկութիւն չիկայ . վասն  
 զի երկինքի տակ՝ ուրիշ մէկ անուն մընալ  
 չիկայ՝ մարդկանց տրված, որով կարե-  
 նանք փրկութիւն գտնալ” . Գաղթ . Դ . 12 :

Ան ողբալի ու թշուառ վիճակը՝ որուն  
 մէջը մեր ազգը հիմայ կը գտնուի կոր, որնոր  
 ԴՈՒ Մատուծաշունչ Գլքին մէջն ալ առա-  
 ջուց զրուցված է, (տես . Ասայ . Դ . 9-13 .  
 ու գլ . իԴ . 10.) պիտի մեռմանալ . Իսրայլ էլը

նարէն օրհնեալ ժողովուրդ մը պիտի ըլլայ ,  
 ու պիտի չըզրուցվի “ ( ) օրհնեալ ըլլայ Աստուած որ մեզ Ազգիպտոսի քաղքէն հանեց ,  
 այլ օրհնեալ ըլլայ Աստուած որ մեզ ամմէն քաղքէն ժողովեց ” : Իսրայէլը՝ հոգևոր Իսրայէլին հետը պիտի միանայ , ու պիտի գրվի Աստուծոյ ծառաներուն մէջը , որոնք որ Ասայեայ մարգարէութեանը նայելով , նոր անուն մը պիտի ունենան . գլ . կր . 2 : Իրաւ է որ՝ հիմակվան բաներուն կարգը ու երևոյթը բնաւ յոյս մը չիտար որ ատ բանը շուտ մը ըլլայ : Բայց ո՞վ գիտէ : Ո՞րչափ անյուսալի բաներ կրտեսնանք կոր մեր օրը , որ մեր միտքէն բնաւ չէր անցնէր : Առջի երկու հազար տարին կը ցըցընեն որ , Աբրահամու կոչմանէն հետէ Աստուած իր ժողովուրդը՝ կամաց կամաց ու աստիճանաբար իր վախճանին հասցուց : Քանի՞ քանի՞ անգամ աս շրէից պզտիկ ազգը իրեն մոլորութիւններուն ծանրութեամբը , ու իր թշնամիներուն բռնութեամբը պիտի կործանէր , բայց միշտ Աստուծոյ կարող ձեռքը անոր օգնութիւն հասաւ ու զանիկա ազատեց . ու պահեց անանկ մէկ սիրով մը , որ մայր մը չի կրնար ունենալ : Ատքի երկու հազար տարին ալ առջիններուն շատ կրնամանի : Ա՛մենա

կարող Մատուծուն խոստմանցը նայելով  
 Մբրահամ բոլոր մէկ ազգ մը եղաւ : Նոյն  
 ինքն Յիսուս Սեսիայն՝ որ անարգեցաւ  
 ու երեսէ ձգվեցաւ , պինտ առաջ  
 միայն տասվերկու առաքեալ ունեցաւ ,  
 որ անհաստատ բնութեամբ , առանց բաղ-  
 դի , առանց կրթութեան ու տկար մար-  
 դիկներ էին : Նայինք ինչ ըրին : Իրենց  
 տէրոջը անունովը գացին բոլոր աշխարհիս  
 քարոզելու , թէ Մատուծ աշխարհս  
 այնչափ սիրեց որ իրեն բուն որդին Յի-  
 սուս Քրիստոս խրկեց , որ անոնց մեղացը  
 համար քաւիչ պատարագ մը ըլլայ . ու  
 զիրենք ալ առաքեալի պէս խրկեր էր  
 որպէս զի Յիսուսի անուանը բոլոր հա-  
 ւատացողներուն՝ ապաշխարութիւն քարո-  
 զեն , մեղաց թողութեան ու յաւիտենա-  
 կան կենաց խոստմունքը տալով : Ու  
 ահա Յունաստանի ու Հռոմայի կուս-  
 տունները կործանեցան , ու խիստ շատ  
 Հրէաներ Քրիստոնէական հաւատքը ըն-  
 դունեցան . ու կուսպաշտ ճանչցրված բո-  
 լոր ազգերէն միլիոնաւոր մարդիկ՝ ան ա-  
 տներ իրենց կուսքերը թողուցին ու կեն-  
 գանի Մատուծոյ դարձան , ուրախանալով  
 Մատուծոյ շնորհացը՝ ու իրենց մեղաց թո-  
 դութեանը վրայ Յիսուսի Սեսիային ձեռ-  
 քովը :

Աւետարանը կրսէ թէ, ճշմարտութեան  
 դէմ դնող խիստ շատ եղաւ, բայց ճշմար-  
 տութիւնը միշտ յաղթող գտնուեցաւ :  
 Նաև աս ետքի ատենները, որ Քրիստո-  
 նէից եկեղեցին կարծես թէ նորէն կու-  
 պաշտութեան մէջ կիյնար կոր Պապա-  
 դաւան կրօնքին մոլորութիւններովը,  
 Աստուած՝ եկեղեցւոյն մէջը միշտ մէկ ընտ-  
 րեալ ժողովուրդ մը, մէկ սուրբ ու թա-  
 գաւորական օծում մը պահեց, որպէս զի  
 զիրենք կոչողին զօրութիւնները հրատա-  
 րակէ. ու նաև սոսկալի ու մահառիթ հա-  
 լածանքներու մէջ՝ Յիսուսի իսկական ճըշ-  
 մարտութեանը համար՝ անդադար վկա-  
 յութիւն ընէ : Ալպիթօաներուն, Սօտու-  
 աներուն, Հիւսսիթներուն կամ Սօրա-  
 վեան եղբարց, ու վեշտասաներորդ դա-  
 րուն մէջը եղած բարեկարգութիւն ընող-  
 ներուն անունը՝ վարքը՝ նեղութիւնները  
 ու չարչարանքները՝ ամմէնուն յայտնի է,  
 ու պէտքը չէ աս տեղս յիշել : Ու աս  
 մեր օրերը՝ որչափ մեծ օգուտներ ու յա-  
 ուաջադիմութիւններ կրնէ կոր Աւետա-  
 րանը՝ Ասիայի մէջ, Ափրիկէի մէջ, Ամե-  
 րիգայի մէջ, ու խաղաղական ծովուն կղզի-  
 ներուն մէջը, ուր որ հազարաւոր կու-  
 պաշտներ կրդառնան կոր Ահհօփայն

պաշտելու համար Յիսուսին անունովը :  
 Եսանկ ըլլալով կրտսնանք կոր որ ան  
 խոստմունքը կրկատարվի կոր. Ասայի լե. 1 :  
 “ Ենապատը ու չոր տեղվանք պիտի ու-  
 րախանան , անբնակ երկիրը պիտի ցնծայ ,  
 ու վարդի պէս պիտի ծաղկի ” :

Մի ամենասիրելի եղբարք իմ , ձեզի ու-  
 րիշ շատ բաներ ունէի զրուցելու . բայց աս  
 տեղս խօսքըս պիտի լրմընցընեմ , որպէս զի  
 ուշադրութիւննիդ չի հատնի : Ձեզի զրու-  
 ցած քիչ խօսքերուս վրայ կուզեմ որ աղէկ  
 ու ծանր քննութիւն մը ընէք : Ես գրու-  
 ածքիս մէջը եղած հիմնական բաները՝ մէյ  
 մը որ աղէկ հասկընալու ըլլաքնէ , բոլոր  
 ձեր մէկալ երկբայութիւնները շուտ մը ին-  
 քիրմէ կըցրուին :

Ես փորձը իմ վրաս ըրի . վասն զի երբոր  
 իմացայ թէ ճշմարիտ ու ուղիղ է Եստու-  
 ծոյ ան խօսքերը , “ Աէհօվայն երկինքէն  
 նայեցաւ մարդկանց տղոցը վրայ , տեսնալու  
 համար՝ թէ արդեօք իմաստուն մը կայ մի  
 որ Եստուած փնտռէ : Եմմէննալ մոլորեր  
 են . ու զգուելի են եղեր . մարդ մը չիկայ որ  
 աղէկութիւն ընէ , նաև մէկ մը չկայ .” Ստղճ.  
 \* Ժ Դ . 2—3 : Ու “ Սարդու սրտին երևակա-

\* Բար Էօլմանանից , Ժ Դ



յուլթիւնը՝ տղայութեան ատենէն աւրած է՝ ճշմարտութենէն ալ չի հեռացայ: Ե ուս մը թողութիւն ու խաղաղութիւն գտայ: Յիսուսի հաւատալով, ու Մատուծոյ սուրբ ուրախութիւնը ուրախացայ: Մասնկ հաւատալովս՝ իմ հոգիս նորոգեցաւ, ու Մատուծոյ Հոգին սրտիս մէջը բնակեցաւ: Մս հոգւովս ստացայ հարկաւոր զօրութիւն մը՝ բոլոր սրտանց սիրելու զանիկա, որնոր առաջ ինքը իս սիրեց. մեղքի դէմ դնելու, հսկելու ու աղօթք ընելու, ու Յիսուսի սուրբ շաղկապը հետեւելու. որ իր վարքովը ինծի օրինակ տուաւ, թէ Մատուծոյ հաճոյ ըլլալու համար ինչպէս պէտք է ապրիլ:

Սերջապէս ձեզի կաղաչեմ, որ աս պղտիկ դրութիւնս նորէն կարդաք իբր առաջի Մատուծոյ, ու Մատուծոյ աղաչելով՝ որ իրեն Հոգւովը ձեզ լուսաւորէ: Գուրք ձեզի մի՛ զրուցէք (ինչպէս որ մեր օրվան հրէաներուն շատը սորված են զրուցելու,) ես գիտուն չեմ որ աս բաներս կարենամ հասկընալ: Մղէկ գիտցէք որ ձեր յաւիտենական վիճակը՝ ճշմարտութիւնը ձանձնալուն ու ճշմարտութեանը հետեւելուն կամ չի հետեւելուն վր կեցած է: Մատուծոյ խօսքը՝ միայն գիտնոց համար գրված չէ, այլ՝ բոլոր աշխրբիս համար է: Գաւիթ

կրողը ուցէ. “Վու՛ն քու պատուիրանքն Երօվա՛  
 իմ թշնամիներէս աւելի իս իմաստուն ըրիր.  
 վասն զի քու օրէնքդ միշտ ինծի հետ է: Աս  
 իմ վարպետներէս աւելի իմաստուն եղայ,  
 վասն զի քու վկայութիւներդ՝ իմ մտածու-  
 թիւնս էին: Սերերէն աւելի իմաստուն  
 եղայ, վասն զի քու պատուիրանքն Երօվա՛  
 հետի: Քու խօսքդ՝ իմ ոտքիս ճրագ է, ու  
 իմ ճամբուս լոյս” : Սող. \* ճԺԺ . 98—  
 105 :

Աղբարք իմ, աղէկ գիտցէք որ, աս գրու-  
 ածքս ձեզի խրկելովս՝ ուրիշ մէկ գիտաւո-  
 րութիւն մը չունիմ, բայց եթէ ձեզ ալ  
 մասնակից ընել ան երջանկութեանը, որն  
 որ ես կրվայելեմ կոր. ձեզի հաղորդելով  
 ան ճշմարտութիւնը, որ ինծի խաղաղու-  
 թիւն ու կեանք արժաւ : Արանի թէ ամ-  
 մէնքդ ալ որ ասօր Աստուծոյ ձայնը կրլսէք  
 կոր, բնաւ ձեր սիրտը չի խտացրնէիք :  
 Ասօրս է ժամանակ ընդունելի, ասօր է օր  
 փրկութեան : Մեր հարցը Աստուածը՝ իր  
 ժողովուրդը օրհնէ. ձեզ ալ օրհնէ, ձեզ՝ որ  
 աս գրութիւնս կրկարդաք կոր, ու ձեզի իր  
 շնորհքը տայ, ամէն :

\* Քու Խօսքն անից, ճԺԺ :

Leban

---

Colem

Ann.

# ՆՈՐԱՏԻՊ ԳՐԵԱՆՔ

Աւետարան Տեառն մերոյ Յիսուսի  
Քրիստոսի . գրաբառ փոքրագիր :

Բանալի ընթերցման կամ Այբբենա-  
րան գիրերը ճանչնալու համար :

Գաւանութիւնք Ս . Յ . Ե . Պայպա-  
յիթի Գերմանացի Հրէի . աշխարհաբառ :

Օքոսարան մանկանց հոգևոր տաղերու  
և խրատներու , և բնական պատմութիւն-  
ներու : աշխարհաբառ և պատկերազարդ :

Եղանակ 1837 Վճին :

Կանոնք կամ բնակք իրերաւարժու-  
թեան , դպրատունները գործածելու հա-  
մար . պատկերազարդ :

Հեգարաննոր կարգով ու դիւրին ճամ-  
բով կարդալ սորվելու համար . աշխարհա-  
բառ և պատկերազարդ :

Նոր կտակարան Տեառն մերոյ Յիսուսի  
Քրիստոսի . գրաբառ փոքրագիր :

Քերականութիւն Անգղիարէն և շա-  
յերէն լեզուի . աշխարհաբառ :

Ի ՕՍԻԻՌՆԵՆ